ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, բուլղարերեն և այլ լեզուներով հրատարակվող «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում տպագրված «Երրորդ ինտերնացիոնալը» հոդվածում ֆրանսիացի կոմունիստ Ժ. Սադուլը մեծագույն նվաճում էր համարում այն փաստը, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունը հանդիսանում է «Հեղափոխության և Ռուսաստանի կոմունիստական կուսակցության հիանալի միությունից ծնված» Կոմունիստական ինտերնացիոնալի հուսալի ջոկատը[1]:

«Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում հրատարակված Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան կոնֆերանսի բանաձևից պարզ է դառնում և Հայաստանի կոմունիստների քաղաքական դիրքորոշումը, պայքարի նպատակը։ «Ռուսաստանի հեղափոխությունը,— ասվում էր այդ փաստաթղթում,— առաջ է քաշել բոլոր ճնշված ժողովուրդների և առաջին հերթին Արևելքի ժողովուրդների համաշխարհային իմպերիալիզմի լծից ազատագրման լոզունգը։ Արևելքն արդեն ոտքի է կանգնել և նրա համակրանքը Սովետական Ռուսաստանի կողմն է»։ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունը և հայ ժողովուրդը,— այնուհետև նշված է կոնֆերանսի բանաձևում,— պետք է «ընդհանուր ճակատ կազմեն Սովետական Ռուսաստանի հետ՝ ընդդեմ միջազգային իմպերիալիզմի», որի հաղթանակի հետ է իր հույսերը կապում դաշնակցական կուսակցությունը[2]:

Այս միտքն իր արտահայտությունը գտավ նաև Ալիքսանդրապոլում հրատարակվող «Ալիք» թերթում։ Աֆղանստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը, Հնդկաստանը այլևս չեն հավատում եվրոպական «բարերարներին» ու նրանց պարագլուխներ Լ. Ջորջին ու Կլեմանսոյին, գրում էր թերթը և համոզմունք հայտնում, որ «Հեղափոխական Արևելքը իմպերիալիզմի մյուս թշնամիների հետ կողք-կողքի հասցնելու է վերջնական հարվածը Անտանտի Եվրոպական «աէրոպագին», որից այնքան ակնածում են, մասնավորապես. Հայաստանի ցավով «տանջվողները»[3]:

Իմպերիալիզմի գաղութային քաղաքականության, մասնավորապես Հայաստանի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի գնահատականը տրվեց Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսում (1920 թ. հուլիսի 19—օգոստոսի 7)։ 37 երկրների կոմունիստական կուսակցությունների պատգամավորներն իրենց ընդունած Մանիֆեստում մասնավորապես նշեցին, որ

[1] «Коммунистический Интернационал», 1920, № 11, с. 1679.
[2] Նույն տեղում, էջ 2545։
[3] «Ալիք», Ալեքսանդրապոլ, 2. I. 1920։

«ազատագրված» Հայաստանն այժմ ավելի քիչ է պաշտպանված, քան երբևէ», իմպերիալիզմի արգասիք հանդիսացող բուրժուական մյուս «ազգային» պետությունների նման նա էլ «ունի իր իրրհդենտը (չազատագրվածը), իր ազգային պալարը»[4]։

Ազգային աղետը Հայաստանի տնտեսական փլուզումն էր, գյուղացիական տնտեսության քայքայումը, մասսայական պաուպերիզմը, բանվորների իրավազրկությունը և աղքատությունը, սպեկուլյացիան ու կաշառակերությունը, ազգամիջյան կոտորածները, «ազգային» կուսակցության ազգադավ և հակաժողովրդական քաղաքականությունը, երկիրը կառավարելու նրա անձարակությունը, վասալական կախվածությունը իմպերիալիստական մեծ տերություններից, Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքը Սովետական Ռուսաստանից մեկուսացնելու քաղաքականությունը, դաշնակցական կառավարության պայքարը «հյուսիսից շարժվող պրոլետարական հեղափոխության և Հայաստանի բանվորների ու գյուղացիների դեմ, որոնք պատրաստ են հարելու այդ հեղափոխությանը»[5]։ Այս քաղաքականության հետևանքով էր, որ, այսպես կոչված, «ազատ ու անկախ Հայաստանը» դաշնակցականների ձեռքում դարձավ բանվորներից ու գյուղացիներից «անկախ» և «սպեկուլյանտների, մաուզերիստների, կուլակների ու դենիկինյան սպաների համար «ազատ» երկիր»[6]։

Հայ ժողովրդին օրհասական դրությունից փրկելու, դաշնակցական կառավարությունը տապալելու, սովետական իշխանություն հաստատելու համար կոմունիստների գլխավորությամբ ոտքի ելավ Հայաստանի ժողովուրդը՝ 1920 թ. մայիսյան հերոսական օրերին։ Հայաստանի կոմունիստական կուսակցության, Կոմունիստական ինտերնացիոնալի, Սովետական Ռուսաստանի կառավարության, ՌԿ/բ/Կ կովկասյան երկրային կոմիտեի, Ադրբեջանի և Վրաստանի կոմունիստական կուսակցությունների ու կոմունիստական երիտասարդական միությունների վավերագրերի և նյութերի, ժամանակի մամուլում հրատարակված հոդվածների վերլուծությունն ակնառու ցույց է տալիս, որ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի համար կոմունիստների գլխավորած համաժողովրդական պայքարը, մայիսմեկյան հուժկու ցույցերը, ժողովրդական զանգվածների հերոսական ապստամբությունը տեղական նշանակության երևույթ չէին։ Դրանք համաշխարհային հեղափոխական պրոցեսի միասնական շղթայի բաղկացուցիչ մասն էին, պրոցես, որն առաջացել էր լենինյան հանճարով իրականացված Հոկտեմբերյան հեղափոխության պայթյունից, իր հզոր բաղուկների մեջ ներառելով Արևմուտքի և Արևելքի կոմունիստական, բանվորական և ազգային-ազատագրական ու գաղութային օրավուր աճող շարժումները։ Այդ պրոցեսի կենտրոնում, որպես միջազգային սոցիալիզմի վառ ջահ, իմպերիալիզմի դեմ պայքարի հզոր նեցուկ կազնած էր Սովետական Ռուսաստանը, որը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի աննկուն ջատագով Կ. Լիբ-

---

[4] «Второй конгресс Коммунистического Интернационала», стенографический отчет, М., 1934, с. 542, 543.

[5] «Коммунистический Интернационал», 1920, № 13, с. 2545.

[6] Նույն տեղում։

կնեիտի խոսքերով ասած, «դարձել էր պայքարի դրոշ, ինտերնացիոնալի դրոշ»[7]։

Եվ միանգամայն օրինաչափ է, որ դաշնակցական կառավարության տապալման, Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի համար մղվող համաժողովրդական պայքարը, Մայիսյան ապստամբության առաջին հաջողություններն արժանացան միջազգային պրոլետարիատի համակրանքին, իսկ ապստամբության դաժան ճնշումը, դաշնակցական կառավարության տեռորն ու հալածանքները առաջացրին նրա բուռն բողոքն ու ցասումը։

«Հայաստանում պայթեց հեղափոխությունը։ Խատիսյանի կառավարությունը տապալված է։ Հայաստանում հռչակված է բանվորների և գյուղացիների սովետական սոցիալիստական հանրապետությունը»[8],— 1920 թ. մայիսի 30-ին ազդարարեց Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադիրներից մեկը՝ Բուլղարիայի կոմունիստական կուսակցությունը, իր օրգան «Ռաբոտնիչեսկի վեստնիկի» միջոցով։

ՌԿԿ/բ/Կ Հայաստանի կոմիտեի և Ալեքսանդրապոլի կոմիտեի մայիսմեկյան փաստաթղթերում ընդգծվում էր, որ խմբապետական դաժան ռեժիմի տակ հեծող, ազգամիջյան կոտորածների թատերաբեմի և ավերակների վերածված Հայաստանի աշխատավորությունը պաշտպանում է այն գաղափարը, որով «տոգորված են Երրորդ՝ Կոմունիստական ինտերնացիոնալը, Խորհրդային Ռուսաստանը և նրա կարմիր բանակը»[9]։ Ալեքսանդրապոլի կոմիտեի կողմից Ն. Նարիմանովին ուղղված հեռագրում հստակորեն նշվում էր, որ Հայաստանի սովալլուկ և իրավազուրկ մասսաները պատրաստ են դաշնակցական կառավարության գլխի վրայով իրենց եղբայրական ձեռքը մեկնել հաղթական կարմիր բանակին և Բաքվի պրոլետարիատին, մեծ Սովետական Ռուսաստանի հետ համատեղ և Սովետական Ադրբեջանի հետ ձեռք-ձեռքի ոտքի ելնել միջազգային իմպերիալիզմի դեմ, «մաքրել հաշիվները հալածանքի և բռնության կառավարության հետ», Հայաստանում հաստատել սովետական կարգեր»[10]։

Մայիսյան ապստամբության համաժողովրդական բնույթի, նրա դաժան ճնշման, Հայաստանում կոմունիստական շարժման, միջազգային իմպերիալիզմի, մասնավորապես ամերիկյան իմպերիալիզմի փարիսեցիության և «Հայասիրության» հարցերը լայնորեն լուսաբանվեցին Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսում՝ «Ազգային և գաղութային հարցերի» քննարկման կապակցությամբ։

1920 թ. հունիսի 1-ին, քննելով կոնգրեսի նախապատրաստման հարցը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ զեկուցող նշանակեց Վ. Ի. Լենինին[11]։ Նույն օրը Վ. Ի. Լենինը ազգային և գաղութային հարցերի գծով հանձնաժողովի համար գրեց հակիրճ պլան՝

---

7 Տե՛ս Ф. Фишер, Как жил и боролся Карл Либкнехт, М.—Л., 1931, с. 58.

8 «Работнически вестник», 30. V. 1920.

9 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը), նյութեր և փաստաթղթեր», կազմեցին Կ. Ղազարյանը և Մ. Ներսիսյանը, Երևան, 1932, էջ 273։

10 Նույն տեղում, էջ 274—275։

11 Н. Е. Королев, Разработка Лениным политики Коминтерна по национальному и колониальному вопросам («Второй конгресс Коминтерна», М., 1972, с. 162).

նախատեսելով թեզիսներում զարգացվելիք հիմնական պրոբլեմները։ Համապատասխան կազմակերպություններում քննարկելու համար հունիսի 5-ին Վ. Ի. Լենինն ուղարկեց «Ազգային և գաղութային հարցերի գծով թեզիսների նախնական ուրվագծերը», որոնցում նախատեսել էր «Հարաբերությունները Կովկասում», «Արևելյան ժողովուրդները» կետերը։ Մինչև այդ՝ 1920 թ. մայիսի 17-ին, Հայաստանի իրավիճակի մասին Վ. Ի. Լենինին հեռագրով հայտնել էին Դիլիջանի հեղկոմը, իսկ մայիսի 22-ին՝ ՌԿ/բ/Կ Կովկասյան երկրային կոմիտեի ղեկավար Ս. Օրջոնիկիձեն։ «Ամբողջ Հայաստանով տարածվեց բանվորա-գյուղացիական ապստամբության լայն ալիքը, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի և Քարվանսարայի կայազորները ապստամբել են և հռչակել սովետական իշխանություն,— ասված էր Դիլիջանի հեղկոմի հեռագրում։ — Հայաստանի ապրստամբ, բռնապետիչների լծի դեմ պայքարող բանվորներն ու գյուղացիները օգնության են սպասում աշխարհի ազատարարից՝ Սովետական Ռուսաստանից»[12]։ Մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում բանվորները և տեղական կայազորը հռչակել են Հայաստանի Սովետական Հանրապետություն, Մոսկվա էր հեռագրում Ս. Օրջոնիկիձեն, «սովետական իշխանություն պահպանվել է 4 օր, որից հետո ապստամբություն ճնշվել է։ Դիլիջանից եկել են հայ կոմունիստներ, խնդրելու՝ աջակցել իրենց»[13]։

Կատարելով Վ. Ի. Լենինի և Կոմինտերնի II կոնգրեսի պահանջը[14], Հայաստանի կոմունիստական կուսակցության պատվիրակությունը, որի կազմում էին Հ. Նազարեթյանը և Ա. Նուրիջանյանը (կոնգրեսի մանդատային հանձնաժողովի հուլիսի 28-ի նիստի որոշմամբ Հայաստանի պատվիրակության կազմում խորհրդակցական ձայնով մտցվեցին նաև Վ. Ավանեսովը և Ի. Քաթանյանը[15]), կոնգրեսին ներկայացրեց զեկուցում, որը «Կոմունիզմը Հայաստանում» վերտառությամբ և Ա. Ն. ստորագրությամբ տպագրվեց «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրի № 13-ում և «Զեկույցներ Կոմունիստական ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսին» ժողովածուում՝ Յա. Կ. ստորագրությամբ։ Զեկուցումը բաղկացած էր երկու մասից՝ «Ընդհանուր դրություններ» և «Ապստամբություն Հայաստանում»։ Ժողովածուում տպագրված նյութը պարունակում էր նաև 12 փաստաթուղթ՝ Մայիսյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանում դաշնակցական սպիտակ տեռորի վերաբերյալ[16]։ Առանձին փաստաթղթեր բաժանվեցին պատգամավորներին՝ որպես II կոնգրեսին Կոմինտերնի գործկոմի հաշվետվության հավելված[17]։ «Կոմունիստական ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսի օրերին մենք Մոսկվայում լուր

---

12 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 322։

13 Նույն տեղում, էջ 323։

14 Ազգային և գաղութային հարցերի մասին զեկուցումով Վ. Ի. Լենինը հանդես եկավ կոնգրեսի հուլիսի 26-ի նիստում։ Հարցը քննարկվեց նաև հուլիսի 28-ի նիստում։ Հարցի քննարկումը տևեց 12 ժամ 30 րոպե, նյութ ունեցավ 28 պատգամավոր։ Լենինյան թեզիսներն ընդունվեցին միաձայն («Второй конгресс Коммунистического Интернационала», с. 98—161).

15 Նույն տեղում, էջ 618, 620.

16 «Доклады Второму конгрессу Коммунистического Интернационала», Пгр., 1920, с. 390—407.

17 «Второй конгресс Коммунистического Интернационала», с. XIII, 13, 615.

ստացանք Մայիսյան ապստամբության մասին։ Մեր ընկերների կարծիքն այն է, որ իրոք Հայաստանում ստեղծվել է այնպիսի դժոխային դրություն, որից աշխատավորությունը ուզում է դուրս գալ»,— նշել է Ալ. Մյասնիկյանը 1921 թ. մայիսի 10-ին, ընդգծելով, որ Մայիսյան ապստամբությունը «հիշեցնում է ավելի շատ Միջին Եվրոպայի բանվորական հեղափոխական ընդվզումները վերջին երկու տարվա ընթացքում»[18]։

«Կոմունիզմը Հայաստանում» փաստաթուղթը տպագրվեց նաև ռուսերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն լեզուներով հրատարակվող «Արևելքի ժողովուրդներ» ամսագրի առաջին համարում։ «Կոմունիստական ինտերնացիոնալի» բուլղարերեն հրատարակությունից այն թարգմանվեց հայերեն և լույս տեսավ արևմտահայ առաջին կոմունիստական պարբերականում՝ Բուլղարիայի կոմունիստական կուսակցության հայկական խմբի «Կարմիր լուրեր» թերթում[19]։ Թերթը ողջունում էր «Կոմունիստական միջազգայնականի երկրորդ համագումարը, որովհետև նրա հաղթանակով հայ ժողովուրդը միայն մի բան պիտի կորցնի՝ իր շղթաները»[20]։

Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի հրատարակած փաստաթղթերի միջոցով էր, որ Ռուսաստանի, Անգլիայի, Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Գերմանիայի, Բուլղարիայի և այլ երկրների կոմունիստները տեղեկացան Կոմունիստական ինտերնացիոնալի լոզունգներով և Վ. Ի. Լենինի դիմանկարներով՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Դիլիջանում, Նոր Բայազետում տեղի ունեցած մայիսմեկյան հուժկու ցույցերի, ժողովրդական ապստամբության և նրա դաժան ճնշման մասին։

«Կոմունիզմը Հայաստանում» փաստաթուղթը հայտնում էր, որ մայիսմեկյան տոնակատարությունը Ալեքսանդրապոլում անցել է կոմունիստական լոզունգների նշանքո, մայիսի 7-ին քաղաքում ստեղծվել է ռազմահեղափոխական կոմիտե, որը մայիսի 10-ին Հայաստանը հայտարարել է սովետական, իսկ դաշնակցական կառավարությունը՝ դավաճանական։ Սովետական իշխանություն է հռչակվում նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում ու Լազարևում։

Նշված փաստաթղթերում խոսվում է դաշնակցական ուժերի և ամբողջ ռեակցիայի համախմբման, սովետական իշխանության տապալման մասին, մայիսի 14-ին Ալեքսանդրապոլի, մայիսի 19-ին՝ Կարսի և Սարիղամիշի անկման, հարյուրավոր զոհերի և սպասվող հեղափոխական նոր վերելքի մասին։ Այնտեղ բերվում է նաև Ալեքսանդրապոլի հերոսական ապստամբությունը ճնշած կառավարական զորքերի հրամանատար Սեպուհի «ազգասիրական» դոհարներից մի նմուշ։ Դիմելով ռազմահեղափոխական կոմիտեին, նա գրում էր. «Կառավարության անունից ես պահանջում եմ Ալեքսանդրապոլը հանձնել կառավարական զորքերին։ Հայտարարում եմ, որ Հայաստանի մեջ ոչ մի այլ իշխանություն գոյություն ունենալ չի կարող, բացի հին կառավարական իշխանությունից։ Թուրքահայաստանում մենք կորցրել ենք Վանը, Մուշը, Էրզրումը և մեզ համար Ալեքսանդրապոլի կորուստը ոչ մի նշանակություն չունի։ Քարը քարի վրա չեմ թողնի, ամեն ինչ կավերեմ, որպեսզի այդ քաղաքի

18 «Կոմունիստ», Երևան, 13. V. 1921։

19 «Կարմիր լուրերում» տպագրված էր միայն «Ապստամբությունը Հայաստանում» բաժինը։

20 «Կարմիր լուրեր», 25. IX. 1920։

հետքն իսկ չմնա։ Հանձնեք շարժման ղեկավարներին, կարմիր բանակի հրամանատար կապիտան Մուսայելյանին, Սովետական Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամներ Ավիսին, Մելքոնյանին»[21]։ Սա սոսկ ահաբեկում չէր, այլ գործնական քայլ։ ԱՄՆ-ի և Անտանտի պետությունների ցույց տված օգնության հետևանքով Հայաստանի շատ ապստամբ բնակավայրեր ավերվեցին, գնդակահարվեցին ազատության համար ոտքի ելած մարտիկներ։ «Դաշնակցականներն ավերում էին ամբողջ շրջաններ, մասսայաբար թալանում և սպանում գյուղացիներին»,— գրում էր «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագիրը[22]։

Մայիսյան իրադարձությունները իմպերիալիստական տերություններին ստիպեցին որոշակի ճշգրտումներ կատարել Հայաստանի նկատմամբ ունեցած իրենց քաղաքականության մեջ։ Ընդ որում, նրանք չէին կարող հաշվի չառնել հայ ժողովրդի ավանդական կողմնորոշումը դեպի Ռուսաստան, Վ. Ի. Լենինի, կոմունիստական կուսակցության հոգատարությունը հայ ժողովրդի պատմական բախտի նկատմամբ։

«Անգլիական քաղաքական և կինվորական շրջանները անհանգստացած էն բոլշևիկների՝ Կովկաս և Փոքր Ասիա թափանցումից։ Հայաստանում ստեղծվել է բոլշևիկյան կառավարություն, որը ճանաչվել է ռուսական սովետների կողմից»,— Լոնդոնից մայիսի 17-ին հաղորդում էր «Լյո պրոգրե դ՝ Աթենս հեռագրական գործակալությունը[23]։ Այս անհանգստությունը երևում է նաև բրիտանական գաղտնի հետախուզության՝ Կոպենհագենից 1920 թ. հունիսի 8-ին և 22-ին ուղարկած հաղորդագրության մեջ, որը տպագրվեց որպես արտաքին գործերի մինիստրության գեկուցագիր։ Անգլիական կառավարությունը «լավատեղյակ է Մոսկվայի և Արևելքի երկրների միջև բանակցություններին», Լ. Ջորջը «շատ է վախեցած» արևելյան երկրներ բոլշևիկյան արշավանքով, որը նրան ստիպեց «մտնելու բանակցությունների մեջ Սովետական Ռուսաստանի հետ», հաղորդում էր բրիտանական հետախուզությունը, հենվելով Լ. Կրասինի՝ Մ. Լիտվինովին գրած նամակի վրա[24]։

Հետաքրքրություն է ներկայացնում նաև դեպի Մայիսյան ապստամբությունը ամերիկյան կառավարող շրջանների և քաղաքական գործիչների ունեցած վերաբերմունքը, որը իր էությամբ գրեթե չէր տարբերվում անգլիականից։ «Անգլիացիներն ու ամերիկացիները,— գրել է Վ. Ի. Լենինը,— հանդես են գալիս որպես ազատության դահիճներ ու ժանդարմներ... Նրանց գենքը պարզ է՝ սովի պարանը։ Ահա թե ինչով են նրանք խեղդում ժողովուրդներին»[25]։

Հայաստանի մանդատը ձեռք բերելու համար իմպերիալիստական պետությունների մեջ ծավալված մրցակցությունը Փարիզի հաշտության կոնֆերանսում ավարտվեց ԱՄՆ-ի հաղթանակով. 1919 թ. մայիսի 14-ին, «Ջորսի

---

21 «Коммунистический Интернационал», 1920, № 13, с. 2598. Տեքստում գրված է. «Սովետական Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ Ավիս Մելքոնյանին»։

22 Նույն տեղում, էջ 2550։

23 «Работнически вестник», 30.V.1920.

24 Political Report. FO—371/4036, 205118 (Copenhagen, June 8, June 22, 1920). Stephen White. Communism and the East: The Baku Congress, 1920. „Slavic Review", Washington, 1974, № 3, p. 503—504.

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 258—259։

խորհրդի» համաձայնությամբ այն հանձնվեց Միացյալ Նահանգներին[26]։ Հուլիսի 5-ին ամերիկյան դեղապետ Հասկելը նշանակվեց Հայաստանում գլխավոր կոմիսար, իսկ ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 1919 թ. սեպտեմբերի 8-ին ընդունեց, այսպես կոչված, «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեին» և պետական դեպարտամենտի ներկայացրած բանաձևը, որով պրեզիդենտ Վ. Վիլսոնը լիազորվում էր Հայաստան ուղարկել ամերիկյան զորք։ Հայաստանի մանդատն ԱՄՆ-ին հանձնելու և Հայաստան զորք ուղարկելու հարցերը նոր «հիմնավորում» ստացան գեներալ մայոր Ջ. Հարբորդի գլխավորությամբ 1919 թ. վերջերին Հայաստան այցելած առաքելության՝ «Պայմանները Մերձավոր Արևելքում» խորագրով զեկուցագրում և Հայաստանում ու Մերձավոր Արևելքում քաղաքական վիճակը ուսումնասիրելու համար 1920 թ. սկզբներին ստեղծված Հ. Կինգի և Չ. Կրեյնի հանձնաժողովի փաստաթղթերում[27]։

Ապրիլի 23-ին ԱՄՆ-ի կառավարությունը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի կառավարությանը և Հայաստանի «պաշտպանության» համար որոշեց ուղարկել 50 հազար զինվոր։ Մայիսի 20-ին Վ. Վիլսոնը ուղերձով դիմեց կոնգրեսին, որտեղ, ինչպես գունազարդելով փաստերը գրում են ամերիկյան պատմաբանները, «անկեղծորեն խորհուրդ տվեց և խնդրեց ամերիկյան սենատին՝ ընդունել Հայաստանի մանդատը»[28]։ Իսկ ի՞նչ է նշանակում մանդատների բաժանում. այդ հարցին սպառիչ պատասխան է տվել Վ. Ի. Լենինը. «Երբ խոսում են մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանում է հափշտակման, կողոպուտի համար»[29]։

Հենց այս տեսանկյունով էր «Կոմունիզմը Հայաստանում» փաստաթղթում մերկացվում ամերիկյան իմպերիալիզմի դիմակը, ցույց տրվում Հայաստանին «հաց մատակարարելու» նրա «մտահոգվածության» դրդապատճառները։ Հայաստանին «Ամերիկան հաց է մատակարարում իհարկե ի հաշիվ այնտեղից դուրս բաշած հումքի, բրդի, բամբակի։ Սակայն ամերիկյան հացը ևս,— կարդում ենք այդ փաստաթղթում,— կառավարության ձեռքում դարձավ հեղափոխության դեմ պայքարի միջոց։ Ստացվող ամբողջ հացն ընկնում է սպեկուլյանտների և գյուղական կուլակների ձեռքը, պետական սպեկուլյատիվ ապարատի մեղքով ստեղծվում է սովահար զանգվածների մի բանակ»[30]։ Ավելին, նախագծելով իր կործանումը, դաշնակցական կառավարությունը ամերիկյան ներկայացուցիչների աջակցությամբ ձեռնամուխ եղավ պարենային պահեստների թալանին։

Այս պարագաներում էր, որ դրսևորվեց ամերիկյան «փրկարարների» իրական դեմքը։ Չնայած ամերիկյան ռազմական առաքելության ներկայացու-

---

26 Г. А. Галоян. Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии, М., 1960, с. 123.

27 James B. Sidney. A mandate for Armenia. Obertin. The Kent University Press. 1967, p. 136—167; Ara Caprielian. Some aspects of the Armenian question and the Armenian Revolutionary Federation („The Armenian Review", Boston, 1976—1977, vol. 29, № 4—116, p. 374, 399).

28 James B. Sidney, Նշվ. աշխ., էջ 222—239, A. Caprielian, Նշվ. աշխ., էջ 375։

29 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 266։

30 «Коммунистический Интернационал», 1920, № 13, с. 2514.

ցիչներ, գնդապետներ Թեյլֆորդը և Էդմոնդը մայիսի 7-ին Երևանից Թիֆլիս փախչելու ճանապարհին կուսակցության Ալեքսանդրապոլի քաղկոմի առաջ պարտավորվեցին «Հայաստան հասցնել նրան հատկացված և Բաթում-Ալեքսանդրապոլ գծի վրա գտնվող ուտեստեղենի կառախմբերը, անկախ նրանից, թե երկրում ինչպիսի կառավարություն կլինի, իմպերիալիստական, ինչպես հիմա, թե՝ սովետական սոցիալիստական»[31], Նրանց շեֆ գնդապետ Հասկելը մայիսի 14-ին Թիֆլիսում պաշտոնապես հայտարարեց, որ ԱՄՆ-ը կդադարեցնի հացի և այլ սննդամթերքի առաքումը Հայաստան, եթե վերջ չտրվի ապստամբությանը, այսինքն՝ եթե այն անհապաղ չճնշվի[32]։

Մայիսի վերջերին ամերիկյան սենատը սկսեց Հայաստանի մանդատն ընդունելու վերաբերյալ Վիլսոնի ուղերձի քննարկումը, որը տևեց մինչև հունիսի 1-ը։ Այստեղ լսվեցին և սթափ ձայներ, որոնց հեղինակներն էին մասնավորապես սենատորներ Սմիթը և Թոմսոնը։ «Մերձավոր Արևելքից ստացված վերջին տվյալների համաձայն կարելի է եզրակացնել, որ բոլշևիկները արդեն գտնվում են Հայաստանում։ Ամերիկյան բանակի այնտեղ գտնվելը այս պարագաներում առաջ կբերի զինված ընդհարում սովետների հետ»,— հայտարարեց սենատոր Թոմսոնը։ Սմիթը, իր հերթին գտնում էր, որ նույնիսկ 100 հազար զինվորների Հայաստանում գտնվելը չի կարող ապահովել Ամերիկայի «անվտանգությունը»[33]։ Հունիսի 1-ին ամերիկյան սենատը 52 ձայնով, ընդդեմ 23-ի, մերժեց Վ. Վիլսոնի առաջարկը՝ Հայաստանի մանդատն ընդունելու մասին[34]։ Դրա պատճառը ոչ թե այն էր, որ «մանդատի գաղափարը անսովոր էր և այնքան հակասական ամերիկյան ավանդույթներին»[35], ինչպես պնդում է Լ. Ջորջը, այլ ռեալ իրավիճակը, հատկապես ԱՄՆ-ի շահը։

Ինչպես նշեց Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսը, ԱՄՆ-ը հրաժարվեց հայկական մանդատից, քանի որ «Հայաստանի բնդերքը չի պարունակում ո՛չ նավթ, ո՛չ պլատին»[36]։ Այս հարցը արծարծվել է նաև «Կոմունիզմը Հայաստանում» փաստաթղթում։ Այնտեղ կարդում ենք. «Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների նկատմամբ միջազգային իմպերիալիզմի ծաղր ու ծանակը առանձնապես պարզորոշ արտահայտվեց Հայաստանի մանդատն ընդունելու մեջ։ Մինչև այժմ էլ մանդատի սակարկությունը շարունակվում է։ Բայց իմպերիալիստները, այնուամենայնիվ, ձեռքից բաց չեն թողնում Հայաստանը, որն ամենից առաջ նրանց հարկավոր է բոլշևիկների դեմ պայքարելու համար»[37]։

---

31 Նույն տեղում, էջ 2548։ Ինչպես վկայում է դենիկինյան բանակի՝ ամերիկյան առաքելությանն ուղեկցող սպա Յուրինովը, Թեյլֆորդը խնդրել էր «Հայկական կառավարությանը հայտնել, որ նրանք ստիպված էին երաշխիք ստորագրել, որովհետև իրենց կարող էին Ալեքսանդրապոլից բաց չթողնել» («Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 289—291)։

32 Նույն տեղում, էջ 447։

33 Г. А. Галоян, նշվ. աշխ., էջ 126։

34 James B. Sidney, նշվ. աշխ., էջ 222—239, A. Caprielian, նշվ. աշխ., էջ 375։

35 Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 394. Իր վրա վերցնելով ամերիկյան իմպերիալիզմի պաշտպանի դերը, Լ. Ջորջը գրում էր, թե ոչ որ չի կարող մեղադրել ԱՄՆ-ին «խարդախ նպատակներում՝ զավթել ուրիշի տարածքը, հանուն բացառապես իր շահերի և շահագիտության» (նույն տեղում, էջ 396)։

36 «Второй конгресс Коммунистического Интернационала», с. 543.

37 «Коммунистический Интернационал», 1920, № 13, с. 2543.

Կոմունիստական ինտերնացիոնալի տարբեր հրատարակություններում տեղ գտած փաստաթղթերը պատմում են դաշնակցական կառավարության դեմ ժողովրդի ցասման գրոհի՝ Մայիսյան ապստամբության, բացառիկ դաժան ճնշման, այն ժողովրդական արյան մեջ խեղդելու մասին։ Արդեն 1920 թ. Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմը տպագրեց 12 փաստաթուղթ, այդ թվում՝ ՌԿ/բ/Կ Երևանի քաղկոմի 1920 թ. մայիսի 23-ի նամակը ՌԿ/բ/Կ Հայաստանի կոմիտեին և Կովկասյան երկրային կոմիտեին, փաստաթղթեր Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Դիլիջանում, Կաղզրվանում, Ղամարլուում, Աշտարակում, Նոր Բայազետում, Քարվանսարայում և այլ վայրերում դաշնակցականների գործադրած վայրագության մասին, 1920 թ. հունիսի 1-ին և 4-ին Կովկասյան երկրային կոմիտեին Ալեքսանդրապոլի բանտից Ս. Մուսայելյանի գրած նամակները, փաստաթղթեր Ալեքսանդրապոլի ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ Ա. Մելքոնյանի և Նոր Բայազետի բոլշևիկների ղեկավար Հ. Սարուխանյանի սպանության մասին[38]։

Երկրային կոմիտե ուղարկելով քաղկոմի հավաքած վավերագրական տեղեկությունները հարյուրավոր կոմունիստների գնդակահարության, Հայաստանի բանվորների և գյուղացիների դեմ դաշնակցության կատարած գազանությունների ու բռնությունների մասին, կուսակցության Երևանի քաղկոմը խնդրում էր «հնարավորին չափ այս ամենի մասին իմաց տալ կենտրոնին, որն աշխարհին կագդարարի հայ բանվորների և գյուղացիների դահիճների մասին»[39]։

Երևանյան դեպքերի մասին հանգամանորեն պատմող փաստաթղթում նշվում է ամբողջ Երևանը ռազմական ճամբարի վերածվելու և քաղաքում մասսայական ձերբակալությունների մասին։ Արձանագրված էր, որ ձերբակալում էր անձամբ ինքը՝ «ձախ» դաշնակ Ա. Ջամալյանը՝ դաշնակցական կառավարության ներքին գործերի մինիստրը։ Ձերբակալությունների հետևանքով «Երևանի ողջ կազմակերպությունը գլխատվեց,— ասված է այդ փաստաթղթում,— այժմ Երևանի բանտերում նստած են մոտ 150 կոմունիստներ»[40]։

Ալեքսանդրապոլից հաղորդվում էր կառավարական զորքերի կողմից քաղաքի զավթման առաջին իսկ պահից կոմունիստների նկատմամբ ձեռնարկված դաժան հաշվեհարդարի մասին։ «Կառավարական կուսակցության գազազած գործակալները, մինչև ատամները զինված սպեկուլյանտները, գյուղական կուլակները, դաշնակցական մյուս թափթփուկները ներխուժեցին հեղափոխական Ալեքսանդրապոլ։ Կառավարական զորքերի հնձյալ ջոկատները վայրենի գոռոցով սլանում էին Ալեքսանդրապոլի փողոցներով՝ հայտարարելով կոմունիստների իշխանության անկման, բուրժուազիայի և նրա սպասավորների հաղթանակի մասին։ Բուրժուազիան արյուն էր պահանջում և կոմունիստ բանվորների արյունը առատորեն ողողում էր Ալեքսանդրապոլի փողոցները։ Կոմունիստական երիտասարդությունը առանց դատ ու դատաստանի գնդակահարվում էր փողոցներում և նրբանցքներում, իսկ առաջնորդներին խոշտանգում էին բոլոր նրանք, ովքեր մի քանի օրվա ընթացքում զրկված էին իշխանությունից ու արտոնություններից»։ Հայտնվում էր, որ գնդակահարվեց մոտ 100 կոմունիստ, ձերբակալվեց 250 մարդ, բանվորական կազմակերպությունը-

38 «Доклады Второму конгрессу Коммунистического Интернационала», с. 401—407.
39 Նույն տեղում, էջ 402։
40 Նույն տեղում, էջ 403։

ները գլխովին ջախջախվեցին, ամբողջ երկաթուղում, կայարանում անց էին կացվում շուրջկալներ և ձերբակալություններ[41]։

Կարսից և Սարիղամիշից ստացված հաղորդագրություններից հայտնի է դառնում, որ սովետական իշխանության անկումից հետո Կարսում գնդակահարվեց՝ 50, ձերբակալվեց՝ 100 կոմունիստ, գնդակահարվեցին ռազմա-հեղափոխական կոմիտեի բոլոր անդամները, շատ ապստամբ գյուղացիներ ու զինվորներ, ավերվեցին շատ գյուղեր[42]։ «Քարվանսարայի շրջանի ապստամբների զանգվածային գնդակահարություններն անթիվ են։ Հրկիզված են ապըստամբների գյուղերը, Կաղզվանում, Իգդիրում, Ղամարլուում, Աշտարակում, մյուս շրջաններում ձերբակալված են անթիվ քանակությամբ ընկերներ, որոնք տեղափոխված են Երևանի բանտ»[43],— ասված է փաստաթղթերից մեկում։

Նոր Բայազետի կուսակցական կազմակերպության ղեկավար Հ. Սարուխանյանի սպանության մասին ասված էր. «քաղաքի գրավումից հետո կառավարական զորքերից 40 հեծյալներ, մերկացնելով ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ ընկ. Սարուխանյանին, ենթարկեցին զազանային խոշտանգումների և մտրակի հարվածներով քշեցին Բայազետի փողոցներով։ Այս վայրենի հաշվեհարդարը տևեց ամբողջ օրը։ Մի ընկեր պատմում է, որ ծեծված և այլանդակված ընկ. Սարուխանյանին սայլով երեկոյան ինչ որ տեղ տարան. դժվար էր իմանալ ողջ էր, թե մահացած ընկ. Սարուխանյանը։ Հաջորդ օրը «Հառաջ» կառավարական օրգանը հայտնեց. «Բայազետի բոլշևիկյան շարժման առաջնորդը գնդակահարված է ռազմա-դաշտային դատարանի դատավճռով»[44]։

Ուշագրավ փաստեր են պարունակում նաև Ալեքսանդրապոլի բանտից 1920 թ. հունիսի 1-ին և 4-ին Ա. Մուսայելյանի՝ ՌԿ/բ/Կ Կովկասյան երկրային կոմիտեին գրած նամակները։ Ս. Մուսայելյանը հունիսի 1-ին գրում էր. «Իմ և հինգ ընկերների վերաբերմամբ դատավարություն է տեղի ունենում. դա ոչ թե դատ է, այլ կուսակցական հաշվեհարդար։ Դատում են հետին թվով՝ մայիսի 8-ին հրատարակված օրենքի մի հավելումով, որի ուժով օրենքը տարածվում է ապրիլի 15-ից կատարված հանցավոր գործողությունների վրա։ Միմիայն արտաքին ուժի միջամտությունը, թեկուզ վերջնագրի ձևով, կարող է մեզ փրկել գնդակահարությունից։ Նրանք կարող են մեզ արձակել և հետո անկյունից խփել, դաշնակցականները ամեն մի ստորության ընդունակ են։ Անհրաժեշտ է ռեալ երաշխիքներ պահանջել»։ Հունիսի 4-ին նա գրում էր. «Ընկերներ, հունիսի 4-ին երեկոյան գնդակահարության դատապարտվածներից երեքին արդեն դուրս տարան՝ բժ. Փանյանին, բժ. Պրիբիլսկուն և բանվոր Սևյանին։ Մնացինք ես՝ Մուսայելյանը (կարմիր բանակի հրամանատար) և Ղարիբջանյանը։ Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ դաշնակները մտածում են հետո մեզ ևս սպանել անկյունից՝ տեռորիստների օգնությամբ, իսկ հետո այդ սպանությունը բացատրել այնպես, որ կատարվել է մասնավոր

41 Նույն տեղում։
42 Նույն տեղում, էջ 405։
43 Նույն տեղում, էջ 405—406։
44 Նույն տեղում, էջ 406։

Հողի վրա... Իմացեք, որ մերոնց յուրաքանչյուր սպանություն կազմակերպվում է դաշնակների կողմից»[45]։

Ն. Ջավարյանը հունիսի 4-ին «Ն» ստորագրությամբ ՌԿ/բ/Կ Կովկասյան երկրային կոմիտեին գրած նամակում հայտնում էր. «Դաշնակցական տեռորը մոլեգնում է։ Իշերը գնդակահարեցին մեր չորս ընկերներին։ Մ/ուսայելյանին/ և Ղ/արիբջանյանին/ սպառնում է նույնը։ Բոլոր ձերբակալվածները բոպև առ բոպև սպասում են նոր էքսցեսներիս»[46]։

Ներկայացնելով փաստաթղթեր Հայաստանում կոմունիստական շարժման, ժողովրդի գործին նվիրված բազմաթիվ կոմունիստների գնդակահարության, ձերբակալված և Հայաստանի բանտերում տանջվող հարյուրավոր բանվորների և գյուղացիների ծանր օրհասական դրության մասին, Կոմինտերնի II կոնգրեսում ՀԿԿ պատվիրակները նշում էին. «Եթե սարսափելի տեռորի բացահայտորեն կատարված այս փաստերին ավելացնենք տասնյակ և հարյուրավոր ապստամբների ոչնչացումը հետ ընկած գյուղերում և ձորերում, ապա պարզ կլինի, որ փոքրիկ Հայաստանում սպիտակ տեռորի սարսափելի պատկերը հնարավոր չէ նկարագրել»։ Նրանք համոզմունք էին հայտնում, որ Կոմինտերնի գործկոմը ամեն միջոց ձեռք կառնի «Հայաստանի կառավարության գաղանային բնաջնջին վերջ տալու համար»[47]։

Դաշնակցականների վայրագությունները, որոնք հայտնի դարձան միջազգային կոմունիստական շարժմանը, առաջ բերեցին կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների, առաջադեմ մարդկանց ցասումն ու վրդովմունքը։ Նրանք պահանջում էին անհապաղ դադարեցնել սպիտակ տեռորը, ազատ արձակել բանտարկյալներին։

«Ընկեր Լենինին, ՌՍՖՍՀ Ժողկոմխորհին, Օրջոնիկիձեին, Բաքվի ռազմահեղափոխական կոմիտեին» ուղղած դիմումում դաշնակցականների դեմ իր բուռն բողոքն էր հայտնում Թիֆլիսի երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպության քաղաքային կոնֆերանսը։ 1920 թ. մայիսի 30-ին ընդունած բանաձևում կոնֆերանսը խնդրում էր ներազդել դաշնակցական կառավարության վրա և «Հայաստանում անհապաղ վերջ դնել արյունոտ սպանդին ու ազատել բանտարկյալ ընկերներին»[48]։

Վրաստանի կոմերիտմիության Կենտկոմի օրգան «Մոլոդոյ պրոլետարի» Թերթը մայիսի 31-ին խոր կսկիծով հայտնում էր, որ «ըստ ստացված տեղեկությունների Հայաստանում դաշնակցական դահիճները գազանաբար սպանել են Ռուսաստանի բանվորա-գյուղացիական երիտասարդության անդրկովկաս-

---

45 Նույն տեղում, էջ 404։ Տեքստում Փանյանի և Սեյանի ազգանուններն աղավաղված են՝ «Պանին» և «Սավին»։

46 Նույն տեղում։

47 «Доклады Второму конгрессу Коммунистического Интернационала», с. 407.

48 «Молодой пролетарий», Тифлис, 31. V. 1920, «Կոմունիստ», Բաքու, 25. VI. 1920։ Կոմերիտմիության Թիֆլիսի կոմիտեն Հայաստանից ստացել էր նամակ, որտեղ ասված էր. «Ձեզ հայտնի է ինչ վիճակում էին մեր կազմակերպությունները։ Մինչև Մայիսյան ապստամբությունը նրանք գոյություն ունեին Երևանում, Ալեքսանդրապոլում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Իգդիրում և Նորաշենում։ Մայիսյան ապստամբության ժամանակ դաշնակները տակն ու վրա արեցին այդ կազմակերպություններն։ Բոլոր ընկերները ձերբակալված են» (Г. Жвания. Комсомол Грузии—помощник Коммунистической партии в борьбе за победу Советской власти, Тбилиси, 1957, с. 50—51).

յան մարզային կոմիտեի անդամ ընկ. Ղուկաս Ղուկասյանին»[49]։ Ինչպես գրում էր Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» թերթը, «Կուսակցական անզուգական աշխատող, կոմերիտմիության մարզային կոմիտեի անդամ ընկեր Ղուկասյանը դարձավ Կարսում հեղափոխական պայքարի առաջին զոհը։ Անդրկովկասի բանվորա-գյուղացիական երիտասարդությունը կորցրեց իր ամենափայլուն ընկերներից մեկին»։ Թերթը նաև ընդգծում էր, թե «այն գաղափարը, որի համար ընկավ Ղուկասը, Անդրկովկասում ծնում է հարյուրավոր նոր Ղուկասներ»[50]։

Հունիսի 5-ին Վ. Ի. Լենինին հայտնելով Հայաստանում Մայիսյան ապստամբության ճնշման մասին, Ս. Օրջոնիկիձեն մանրամասն գրում էր Ալեքսանդրապոլում, Երևանում և այլ վայրերում դաշնակ մաուզերիստների սարքած սպանդի, նրանց մասսայական գաղանությունների մասին. «Երևանում կառավարությունը ջախջախել է մեր կազմակերպությունը, բանտարկել մեր բոլոր ընկերներին։ Հակահեղափոխության ժամանակավոր հաղթանակը Հայաստանում մեր շարքերից խլել է հարյուրավոր ընկերների կյանք. դաշնակցական տրիբունալի որոշմամբ մեր լավագույն ընկերներից մի քանի տասնյակ գնդակահարված է։ Ալեքսանդրապոլում և նրա շրջակայքում կատարվում են մասսայական գնդակահարություններ։ Ամբողջ Հայաստանում իշխում է դաշնակցական մաուզերիստների լուծը։ Կենդանի մնացած ընկերները և նրանց ընտանիքները բանտարկված են, Հայաստանի բանտերը լիքլցուն են կարմիր ապստամբներով և նրանց ընտանիքներով, որոնք ենթարկվում են խոշտանգումների ու բռնության»[51], Ս. Օրջոնիկիձեն ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի անունից խնդրում էր Վ. Ի. Լենինին՝ ներազդել դաշնակցական կառավարության վրա, պահանջել նրանից վերջ տալ արյունոտ տեռորին։

Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի գործերին Վ. Ի. Լենինը լավատեղյակ էր նաև Ս. Կիրովի, Գ. Չիչերինի և կուսակցական ու սովետական այլ գործիչների հաղորդումներից, նրանց հետ ունեցած զրույցներից[52]։

Հայ ժողովրդի պատմական բախտի նկատմամբ Վ. Ի. Լենինի մտահոգությունն արտահայտվեց Հայաստանի վարչապետ Հ. Օհանջանյանին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի՝ 1920 թ. հունիսի 4-ին և հուլիսի 19-ին հղած հուշագրերում։ Սովետական կառավարությունը վճռականապես պնդում էր, որ անհապաղ աղատ արձակվեն կոմունիստ բանտարկյալները և դադարեցվեն Հայաստանի կոմունիստական շարժման գործիչների նկատմամբ գործադրվող բռնություններն ու գնդակահարությունները[53]։

Դաշնակցականների գաղանությունների դեմ համատեղ հուշագրով 1920 թ. հունիսի 20-ին հանդես եկան Սովետական Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը, ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն, Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեն (Ա. Միկոյանի, Վ. Նանեյշվիլու, Հ. Կոստանդյանի, Ա. Նուրիջանյանի ստորագրությամբ), պահանջելով վերջ տալ արյունոտ տեռորին։ Նման պահանջով հանդես եկավ նաև Վրաստանի կոմկուսի Կենտկոմը։

---

49 «Молодой пролетарий», 31.V.1920.

50 «Կոմունիստ», Բաքու, 24. VII. 1920։

51 Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 2, М., 1956, с. 113—114.

52 В. И. Ленин, ПСС, т. 41, с. 620, 621, 627, 629, 630.

53 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 441։

Դաշնակցական մաուզերիստների վայրագությունը վրդովում է «Ադրբեջանի պրոլետարիատի և սովետական Ռուսաստանի կարմիր զորքերի հեղափոխական խիղճը,— ասված էր վերոհիշյալ հուշագրում։ — Մենք որոշել ենք դիմել Մոսկվա, համոզված լինելով, որ Ռուսաստանը ձեռք կառնի բոլոր միջոցները՝ վերջ տալու ձեր արյունոտ վարմունքին»[54]։

Աշխարհի բոլոր հեղափոխական և բանվորական կազմակերպություններին, Երրորդ ինտերնացիոնալի գործադիր կոմիտեին, Վրաստանի և Հայաստանի բոլոր արհմիություններին և գործարանային կոմիտեներին ուղղված կոչում ՌԿ(բ)Կ Թիֆլիսի կոմիտեն, հարգելով ժողովրդի գործի համար զոհված կոմունիստներ Ս. Ալավերդյանի, Ս. Մուսայելյանի, Բ. Ղարիբջանյանի և մյուսների հիշատակը, միահամուռ զայրույթով և բողոքով պահանջում էր վերջ տալ տեռորին ու հալածանքներին, ազատել Հայաստանի բանտերում հեծող և սովամահության դատապարտված կոմունիստներին ու նրանց համակրողներին, տալ անձի անձեռնմխելիության լիակատար երաշխիք։

Դաշնակցական կառավարության «արյունոտ բաքոսյան խնջույքի» դեմ բողոքի բանաձևերով հանդես եկան ՌԿ(բ)Կ Թիֆլիսի կոմիտեն, Փոթիի, Քութայիսի և այլ քաղաքների բանվորական կազմակերպությունները, որոնք համոզմունք էին հայտնում, որ «Հայաստանի քաղաքական թխպոտ երկինքը կոմունիստների ղեկավարությամբ շուտով կպարզվի» և Հայաստանում կհաղթեն պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները[56]։ Վաղվա օրվա նկատմամբ լավատեսությամբ էր լեցուն նաև Երիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմին Հայաստանի և Վրաստանի կոմերիտմիության Կենտկոմի ներկայացրած զեկուցագիրը։ Թիֆլիսից Երիտասարդության Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմ ուղարկված և վերջինիս հրատարակած փաստաթղթում ասված էր. «Հայաստանում բռնկվեց ապստամբություն. ապստամբները գրավեցին շատ քաղաքներ, ընդ որում կոմունիստական երիտասարդությունը ցուցաբերեց կենդանի մասնակցություն։ Շատ ընկերներ զոհվեցին մարտերում, մյուսները՝ գնդակահարվեցին, հարյուրավորներն այսօր էլ տանջվում են զնդաններում։ Ապստամբությունը ճնշվելուց հետո կոմերիտական բոլոր կազմակերպությունները ոչնչացվեցին։ Բայց Վրաստանի Կենտկոմը Հայաստան ուղարկեց նոր ընկերներ և միջոցներ է ձեռք առել կազմակերպությունների վերականգնման համար»[57]։

Հեղափոխական լավատեսությամբ էր հագեցված ՌԿԵՄ Կովկասյան կոմիտեի հյուսիս-կովկասյան բյուրոյի փաստաթուղթը։ Նշելով Հայաստանում տիրող մղձավանջային վիճակը, բյուրոն ընդգծում էր, որ Հայաստանի բանվորա-գյուղացիական երիտասարդությունը վճռականորեն գնում է դեպի հաղթանակ, դեպի կոմունիզմ, դեպի լույսը և արդարությունը[58]։

Դաշնակցության ներքին և արտաքին քաղաքականության դեմ ակտիվ

54 «Կոմունիստ», Բաքու, 20. VI. 1920։

55 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 380—381։

56 Նույն տեղում, էջ 385—386։

57 «Молодежь в революции. Три года пролетарского юношеского движения (1918—1920). Отчет ИК КИМ Всемирному конгрессу революционной пролетарской молодежи», Петроград, 1922, с. 129

58 «Советский Кавказ», 28.V.1920.

Հանդես եկան նաև ափյուռքահայ առաջադեմ դանդվածները։ Կոմունիստական կուսակցության հայկական խումբը Պլովդիվում, Բուրգասում, Վառնայում և Բուլղարիայի այլ վայրերում տարածած բացիկներում, դաշնակցականների կազմակերպած այսպես կոչված «անկախության փոխառության» հանգանակության կապակցությամբ մերկացրեց Հայաստանը կառավարողների հակաժողովրդական էությունը, նրանց հետու գնացող նպատակները և հռչակեց «Կորչի դաշնակցական կառավարությունը», «Ող մի գրող Անտանտայի շներուն», «Կեցցե Ռուսաստանի հոկտեմբերյան հեղափոխությունը», «Կեցցե Սովետական Հայաստանը» լոզունգները։ Նա ցույց տվեց, որ դաշնակցության ձեռնարկած «անկախության փոխառությունը» իրականում «ստրկության փոխառություն է», որի նպատակն է Հայաստանում ճնշել հեղափոխական շարժումները, կազմակերպել նոր արկածախնդրություն։ «Մայիսյան ապստամբության փորձը, խեղդված արյան մեջ», Հայաստանում թևածող տեռորը, զինվորական դատարանների և գրաբռնության սանձարձակությունը, կատարյալ ներքին ռեակցիան՝ քողարկված արտաքին վտանգին դիմագրելու պատրվակով «որոշ լույս կսփռեն փոխառության նպատակների շուրջը», գրում էր «Կարմիր լուրեր» թերթը[59]։

Մայիսյան ապստամբության, Հայաստանում տարածված տեռորի և սարսափի համայնապատկերը լայնորեն արծարծվեց Արևելքի ժողովուրդների I համագումարում, որը Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի նախաձեռնությամբ 1920 թ. սեպտեմբերի 1—8-ը հրավիրվեց Բաքվում։ Համագումարին, որի աշխատանքներին մասնակցում էին 37 ազգությունների 2050 ներկայացուցիչներ, Հայաստանում տիրող վիճակի մասին զեկուցեց Հայաստանի 157 հոգուց բաղկացած պատվիրակությունը. նա նաև կոչով դիմեց համագումարին։ Համագումարին զեկույցներ ու դիմումներ ներկայացրին Շամշադինի, Դիլիջանի, Կարսի, Բաթումի պատվիրակները[60]։

Համագումարին Հայաստանի ներկայացուցիչների ներկայացրած կոչում նշվում էր, որ դաշնակցական կառավարությունն «իր քաղաքականությունն անց է կացնում հրով ու սրով, արյունով ու երկաթով. հանուն Անտանտի և հայ բուրժուազիայի շահերի շատ ծաղիկ կյանքեր է զոհաբերում մերթ Հայաստանից դուրս տեղի ունեցող պատերազմում, մերթ բուն Հայաստանում տեղի ունեցող մղձավանջային ազգամիջյան արյունահեղ ընդհարումների հարցում։ Թուրքական իմպերիալիստների արշավանքից ավերված երկիրը, դաշնակ իմպերիալիստների իշխանության տակ բոլորովին քայքայվեց,— կարդում ենք այնուհետև կոչում,— Հայաստանը ամբողջովին ընկավ ինչպես տնտեսապես, այնպես էլ բարոյապես. նա հսկայական բայլերով գնում է մահվան անդունդը։ Բանդիտ մաուզերիստների իշխանության տակ Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները վերջնականապես ահաբեկված են...

Բայց արդեն սոթ մայիսին տեղի ունեցած հեղափոխության առաջին որոտը խարխլեց քրեական ոճրագործների կառավարության արգահատելի ռեժիմը։ Ազատվեցին Հայաստանի աշխատավորների բազմահազար մասսաները, որոնք, մեկ անգամ արթնացած լինելով, որոշեցին չստրկանալ անշման ու բռնության կառավարության։ Անտանտի և նրա վարձկան դաշ-

59 «Կարմիր լուրեր», 25. IX. 1920։

60 «Народы Востока», 1920, № 7, с. 49—53.

նակների անընդհատ ազգայնական պատերազմների արյունարբու քաղաքականությանը, իրենց իրավազուրկ դրությանը Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները մայիս ամսին պատասխանեցին նրանով, որ ընդհանուր ապստամբություն բարձրացրին կոմունիստների կուսակցության ղեկավարությամբ, Հայաստանը հայտարարելով սովետական։ Սակայն մաուզերիստների և դենիկինյան սպաների միացյալ ուժերը նորից վերականգնեցին սև Հայաստանը, որն այժմ դարձել է Հայաստանի դաշտերում ընդակահարված և բանտերում տառապող հարյուր և հազարավոր կարմիր ապստամբների ու նրանց առաջնորդների՝ կոմունիստների դերեզմանը։

Կոչում նաև ընդգծվում էր, որ Հայաստանը պետք է ազատագրվի միջազգային գիշատիչների դարավոր ճնշումից, նա պետք է ազատագրվի նրանց վարձկանների՝ մաուզերիստների իշխանությունից, դառնա այնտեղ բնակվող ժողովրդական մասսաների սիրելի սովետական սոցիալիստական հայրենիքը[61]։

Մայիսյան ապստամբության և Հայաստանում տիրող վիճակի հարցերը լայնորեն արծարծվեցին նաև համագումարի պատգամավորների ելույթներում, միահամուռ ընդունված փաստաթղթերում։

Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի անդամ Բ. Կունի՝ համագումարին ներկայացրած «Արևելքում սովետական իշխանության մասին» թեզիսներում ցույց էր տրվում, որ Արևելքի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի փրկությունը սովետական իշխանության հաղթանակի մեջ է։ Ազատության և հավասարության լոզունգների տակ իրենց հռչակելով Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի դեմոկրատական հանրապետություններ, մենշևիկները Վրաստանում, դաշնակցականները Հայաստանում, մուսավաթականներն Ադրբեջանում դրսևորեցին իրենց որպես ապաշնորհ քաղաքագետներ, վարկաբեկեցին ժողովրդական իշխանության գաղափարը, ասված էր թեզիսներում։ Ժողովրդական դանգվածների անսահման աղքատությունը գտնվում է իմպերիալիստների գործակալների ցոփության կողքին, ապացուցում սոցիալիստական լոզունգներով հանդես եկող մենշևիկյան և դաշնակցական կառավարությունների հակաժողովրդական, կեղծ դեմոկրատական, երկերեսանի լինելը, նշում էր Բ. Կունը[62]։ Այս եզրակացությունը լրիվ համապատասխանում է Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսի մանիֆեստում առաջ քաշված հետևյալ մտքին. «Նորաստեղծ մանր բուրժուական պետությունները հանդիսանում են լոկ իմպերիալիզմի արդասիք»[63]։

Նշելով, որ դաշնակցական Հայաստանը գոյություն ունի միայն Անտանտից ստացած փողի, զենքի, հացի օգնությամբ, համագումարը արձանագրեց. «Եթե եվրոպական իմպերիալիզմը զենքով, փողով և հացով պաշտպանում է դաշնակցական Հայաստանին և մենշևիկյան Վրաստանին, ապա դա արվում է այն նպատակով», որպեսզի այդ երկրները դառնան պատ-

---

61 Նույն տեղում, էջ 49—50, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 376—377։

62 «Первый съезд народов Востока», Пгр., 1920, с. 113—116; «Народы Востока», 1920, № 1, с. 43.

63 «Второй конгресс Коммунистического Интернационала», с. 542.

նել հեղափոխական Ռուսաստանի և Արևելքի ժողովուրդների միջև[64]։ Համագումարը այնուհետև ընդգծեց, որ միայն պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի մեջ է արտասահմանյան կապիտալի ճնշումից այդ երկրների ազատագրման երաշխիքը, որի համար անհրաժեշտ է «Արևելքի բոլոր ժողովուրդների սերտ դաշնակցությունը Սովետական Ռուսաստանի՝ համաշխարհային հեղափոխության ջահակրի հետ»[65]։

Համագումարում հատուկ ուժով հնչեց ամերիկյան կոմունիստական շարժման ականավոր գործիչ, Կոմինտերնի գործադիր կոմիտեի անդամ, «Տասն օր, որ ցնցեց աշխարհը» գրքի հեղինակ Ջ. Ռիդի այժմեական հնչեղություն ունեցող ելույթը, որը Արևելքի ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ ամերիկյան իմպերիալիստների քաղաքականությունը մերկացնող մեղադրական եզրակացություն էր։ «Ամերիկյան կապիտալիստները ներկայումս դիմում են Մերձավոր Արևելքի ժողովուրդներին բարեկամական խոսքերով, պարենով օգնելու խոստումներով. դա հատկապես վերաբերում է Հայաստանին։ Եվ շատ հայեր այժմ սպասում են օգնության ձեռք Ամերիկայից,— ասաց Ջ. Ռիդը,— այդ նույն ամերիկյան կապիտալիստները թունավորում են բանվորներին և գյուղացիներին միմյանց դեմ, նրանք սովի են մատնում և շահագործում Կուբայի և Ֆիլիպինյան կղզիների ժողովուրդներին, կենդանի այրում ամերիկյան նեգրերին. փողոց շպրտում ամերիկացի բանվորներին, որոնք մեռնում են սովից»։

Նշելով, որ «Շատ հայեր շնորհակալ են Ամերիկայից՝ Թուրքերի դաղանությունից տուժած հայերի նկատմամբ նրա վերաբերմունքի համար», Ջ. Ռիդը հարց էր տալիս. «Բայց ի՞նչ է արել Ամերիկան հայերի համար, բացի մերկապարանոց հայտարարություններից»։ Հարցին բացասաբար պատասխանելուց բացի, որպես ապացույց, Ջ. Ռիդը բերում է 1915 թ. Կոստանդնուպոլսում իր եղած ժամանակ ամերիկյան միսիոներների և դեսպանորդի վարքագիծը մերկացնող փաստեր։ Առաջինները վախենում էին կորցնել իրենց հարստությունը Թուրքիայում և հետևաբար չէին ցանկանում «նեղացնել» Թուրքերին, երկրորդը առաջարկում էր ամբողջ հայ ժողովրդին տեղափոխել Ամերիկա, ստիպել հայերին աշխատելու ամերիկյան գործարաններում ու ֆաբրիկաներում՝ որպես էժան աշխատուժ։

Իր իսկ առաջադրած բայց «ինչո՞ւ են ամերիկյան կապիտալիստները խոստանում Հայաստանին օգնություն և պարեն, մի՞թե դա զուտ մարդասիրություն է» հարցերին Ջ. Ռիդը պատասխանում է. «եթե դա այդպես է, թող կերակրեն Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդներին և օգնեն Ամերիկայի նեգրերին։ Նա բացատրում է և գլխավոր դրդապատճառը. դա Հայաստանի հանքային հարստությունն է, էժան աշխատուժի առկայությունը, հայերի վստահությունը շահելով «իրենց թաթը Հայաստանի վրա դնելու և հայ ազգը ստրկացնելու» ձգտումները։ Բացի այդ, ամերիկյան կապիտալիստները վախենում են, որ Հայաստանի բանվորները և գյուղացիները կհետևեն Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի օրինակին, կվերցնեն իշխանությունն ու հարստությունը իրենց ձեռքը և կաշխատեն իրենց համար, ամբողջ աշ-

64 «Первый съезд народов Востока», с. 137

65 Նույն տեղում, էջ 29—30։

խարսի բանվորների և գյուղացիների հետ ստեղծելով միասնական ճակատ համաշխարհային իմպերիալիստների դեմ»[66]։

Առաջ քաշելով ռուսական բոլշևիկների և Կոմունիստական ինտերնացիոնալի դիկտատուրայի բոլոր ճնշված ժողովուրդների համերաշխության ամրապնդման հարցը, Զ. Ռիզը Արևելքի ժողովուրդներին կոչ արեց «չհավատալ ամերիկյան կապիտալիստների խոստումներին, գնալ ազատության միակ ճանապարհով, Սովետական Ռուսաստանի շուրջը համախմբվելու, նրա հետ միավորվելու, Կոմունիստական ինտերնացիոնալի կարմիր աստղի լուսատու ճանապարհով»։

Արևելքի ժողովուրդների հարվի համագումարը դարձավ Կոմունիստական ինտերնացիոնալի լենինյան քաղաքականության հզոր պաշտպան։ Եվ պատահական չէ, որ այդ համագումարի որոշումները Վ. Ի. Լենինը գնում էր Կոմինտերնի II կոնգրեսի որոշումների կողքին։ «Թե ի՞նչ արին Մոսկվայում կայացած կոմունիստների համագումարը և Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների կոմունիստական ներկայացուցիչների համագումարը,— դա անկարելի է միանգամից չափել, դա անկարելի է անմիջական հաշվառման ենթարկել,— դրում էր Վ. Ի. Լենինը,— բայց դա այնպիսի նվաճում էր, այն ավելին է, քան մյուս ռազմական հաղթանակները, որովհետև նա ցույց է տալիս մեզ, որ բոլշևիկների փորձը, նրանց գործունեությունը, նրանց ծրագիրը, կապիտալիստների և իմպերիալիստների դեմ ռևոլյուցիոն պայքար մղելու նրանց կոչը ընդունելություն գտան ամբողջ աշխարհում, և այն, ինչ որ արված է Մոսկվայում հուլիսին և Բաքվում՝ սեպտեմբերին, դեռ երկար ամիսներ կյուրացնեն ու կմարսեն աշխարհի բոլոր երկրների բանվորներն ու գյուղացիները։ Դա այնպիսի ուժ է, որը որևէ կոնֆլիկտի ժամանակ, որևէ ճգնաժամի ժամանակ հանդես կգա Սովետական Ռուսաստանի օգտին»[67]։

Հայ ժողովրդի պայքարը իր ազատության համար 1920 թ. նոյեմբերի 29-ին պսակվեց հաղթանակով. Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն։ Համաշխարհային հեղափոխության առաջնորդը, ողջունելով ազատագրված Հայաստանի ժողովրդին, գրեց. «Հանձին ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Ձեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թյուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»[68]։

Հայաստանի ազատագրման փաստը արձանագրեց նաև Կոմունիստական ինտերնացիոնալը. «Կապիտալիստական պետությունների համակարգի անկման թատրում Սովետական Ռուսաստանը հզոր և ամուր կանգնած է Բերլինայից մինչև Վլադիվոստոկ, Մուրմանսկից մինչև Հայաստանի լեռները, որպես Եվրոպայում, Մերձավոր և Հեռավոր Արևելքում իշխող հարատև գործոն»[69]։ Սովետական հզոր Ռուսաստանի փրկարար օգնությունն էր, որ ազատագրություն բերեց նաև Հայաստանի բանվորա-գյուղացիական զանգվածներին, նրանց առաջ բացելով սոցիալական և ազգային իսկական վերածննդի լայն հեռանկարներ, որոնք այսօր դարձել են իրականություն։

---

66 Նույն տեղում, էջ 122—125։

67 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 408։

68 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 550։

69 «Коммунистический Интернационал в документах 1919—1932», М., 1932, с. 29։

МАЙСКОЕ ВОССТАНИЕ В МАТЕРИАЛАХ КОММУНИСТИЧЕСКОГО ИНТЕРНАЦИОНАЛА

ГРАНТ АВЕТИСЯН

Резюме

Героическое Майское восстание в Армении нашло широкий отклик и поддержку международного пролетариата, а его кровавое подавление дашнаками и их американскими хозяевами вызвало гнев и возмущение пролетарских интернационалистов.

События в Армении нашли отражение на страницах журналов «Коммунистический Интернационал», «Народы Востока», в сборнике «Доклады Второго конгресса Коминтерна» и других публикациях Коминтерна, изданных на русском, английском, французском, немецком, болгарском, арабском, турецком, азербайджанском, персидском, армянском языках.

Особенно широко освещалось Майское восстание в связи с докладом В. И. Ленина на II конгрессе Коминтерна (Москва, 19 июля—7 августа 1920 г) по национальному и колониальному вопросам и в связи с Первым съездом народов Востока (Баку, 1—8 сентября 1920 г.).